ՄԻՆԱՍՅԱՆ ՄԱՏԵՆԱԴԱՐ

Ավետիս Գրիգորյան, Արսեն Բոբոխյան

# ՕՊԵՐԱՑԻԱ «ՁՈՐ»

## Ինչպես Հայաստանը 1919-ին պահեց Սոթքի բնագիծը

newmag



ՄԻՆԱՍՅԱՆ ՄԱՏԵՆԱՇԱՐ

Ավետիս Գրիգորյան, Արսեն Բոբոխյան

# ՕՊԵՐԱՑԻԱ «ՁՈԴ»

Ինչպես Հայաստանը 1919-ին պահեց Սոթքի բնագիծը

new mag

ԵՐԵՎԱՆ
2022

ՀՏԴ 93/94
ԳՄԴ 63.3
Գ 888

Գրիգորյան Ավետիս, Բոբոխյան Արսեն
Գ 888 Օպերացիա «Զոդ». Ինչպես Հայաստանը 1919-ին պահեց Սոթքի բնագիծը/ Ա. Գրիգորյան, Ա. Բոբոխյան.- Եր.: Newmag, 2022.- 404 էջ.- («Մինասյան» մատենաշար):

Ադրբեջանը չի թաքցնում իր տարածքային հավակնությունները Հայաստանի Գեղարքունիքի մարզի սահմանային շրջանների նկատմամբ: Այս աշխատությունը ցույց է տալիս, որ Բաքվի նկրտումները նոր չեն, առնվազն 100 տարվա պատմություն ունեն: 1919 թվականին Սոթքի շրջանի թաթարական բնակչությունն Ադրբեջանի դրդմամբ ապստամբում է Հայաստանի իշխանության դեմ և հայտարարում Ադրբեջանին միանալու մասին: Եվ միայն «Զոդ» օպերացիայի շնորհիվ է այս կարևորագույն շրջանը մնում Հայաստանի կազմում:

«Զոդ» օպերացիան գրեթե անհայտ է լայն հասարակությանը, մինչդեռ այն վերջին հարյուրամյակի մեր պատմության ամենափայլուն էջերից է: Գրքի հեղինակներն առաջին անգամ և նոր փաստական տվյալների հիման վրա ներկայացնում են Սևանա լճի տարածաշրջանում հայ-թաթարական բախումների պատճառները, ժամանակագրությունը, հետևանքները:

Համակողմանիորեն քննարկելով Վարդենիսի հերոսական ինքնապաշտպանության և «Զոդ» օպերացիայի ռազմաքաղաքական ու պատմամշակութային նշանակությունը՝ հեղինակներն իրականացրել են միջգիտակարգային հետազոտություն, օգտագործել ոչ միայն պատմական-արխիվային, այլև հնագիտական ու բանագիտական տվյալներ: Նրանք հատուկ այս գրքի համար հնագիտական պեղումներ են իրականացրել Գեղարքունիքի մարզում, հավաքել են ականատեսների ու նրանց ժառանգների վկայությունները և այդ դեպքերին առնչվող ժողովրդական երգերը:

Գրքի հարցադրումները չափազանց արդիական են հենց այսօր: Այդ պատճառով գիրքը նախատեսված է ոչ միայն նեղ մասնագիտական, այլև քաղաքականությամբ, պատմությամբ ու մշակույթով հետաքրքրվող ընթերցողների համար:

ՀՏԴ 93/94
ԳՄԴ 63.3

ISBN 978-9939-884-47-9
Գիրքը հրատարակության է երաշխավորել ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի գիտական խորհուրդը:

Ավետիս Գրիգորյան, Արսեն Բոբոխյան, Օպերացիա «Զոդ». ինչպես Հայաստանը 1919-ին պահեց Սոթքի բնագիծը, © 2022, «Նյու Մեգ» ՍՊԸ

Այս գրքի հայերեն հրատարակության բոլոր իրավունքները պատկանում են «Նյու Մեգ» ՍՊԸ-ին և «Հասրաթյան-Մինասյան» հիմնադրամին: